ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

0077, Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 26

«29» 04 2013 թ.

Հ 4-671

Ինֆորմացիայի ազատության կենտրոն ՀԿ
իրավաբան Գևորգ Հայրապետյանին

Հարգելի պարոն Հայրապետյան,

Ի պատասխան 2013թ. ապրիլի 18-ի Ձեր գրության՝ տեղեկացնում ենք, որ ՀՀ Նախագահի աշխատակազմի գործընկեր «Զարգացում և ինտեգրացիա» հասարակական կազմակերպությունն ունի ինտերնետային կայքէջ (www.dei.am), որտեղ տեղեկություններ կան ՀՀ Նախագահի հրամանագրի համաձայն հիշյալ կազմակերպության կողմից հասարակական կազմակերպությունների միջև դրամաշնորհային մրցույթի կազմակերպման ամբողջ գործընթացի մասին: Կայքում, մասնավորապես, տեղադրված են «Զարգացում և ինտեգրացիա» հասարակական կազմակերպության գործունեությունը կարգավորող իրավական ակտերը, այդ թվում՝ ՀՀ Նախագահի հրամանագրով հաստատված դրամաշնորհների հատկացման կարգը, դրամաշնորհային ծրագրերին մասնակցելու հայտի ներկայացման ձևը, մրցույթների հրավերները, դրամաշնորհային մրցույթների ամփոփման արդյունքները:

Հարգանքով՝ Գ. Սարգսյան